ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք, ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Տեղ 35/2, Հեռ. 0284-96-2-72, tegh.syuniq@mta.gov.am

N 01-149
14 օգոստոս 2017թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏ
Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան.

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Ս. Բարխուդարյան 11 և 11/1 հասցեներում գտնվող նախկին հիվանդանոցի և ծննդատան շենքերը սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու վերաբերյալ տեղեկացնում ենք, որ

1. Տեղ համայնքի Ս. Բարխուդարյան 11/1 հասցեում գտնվող նախկին ծննդատան շենքում 2009թվականից գործում է Տեղի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունը: Հաստատությունը չունի շենք: Համայնքի կողմից իրականացվել է մոտ 900 հազար դրամի վերանորոգման աշխատանքներ: Համաձայն ՀՀ կառավարության 13.10.2016թ. N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, նշված գույքը որպես նվիրաբերություն ծառայելու է նախադպրոցական ուսումնական հաստատությանը, կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետի՝ տեղեկացնում ենք, որ նշված գույքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում, <<Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ—ի տնօրինության տակ, մակերեսը՝ 127ք.մ.:

2. Տեղ համայնքի Ս. Բարխուդարյան 11 հասցեում գտնվող նախկին հիվանդանոցի շենքը գտնվում է անմխիթար վիճակում և առաջիկայում որևէ շինարարական աշխատանք չկատարելու դեպքում այն լրիվ կփլվի: Համաձայն ՀՀ կառավարության 13.10.2016թ. N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ նշված գույքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում, <<Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ—ի տնօրինության տակ, մակերեսը՝ 405ք.մ., կարգի 4-րդ և 5-րդ կետերի՝ տեղեկացնում ենք, որ նշված շինությունում իրականացվելու է ներդրումային ծրագիր, որը բխում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրից:

Կից ներկայացվում է ներդրումային ծրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԵՐՍԵՍ ՇԱԴՈՒՆՑ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բաղդասարյան
094-93-01-05

ՀՀ կառավարության առընթեր
պետական գույքի կառավարման
վարչության աշխատակազմ
ՄՏԻՑ
ԲՀ. Ն-09/7807-17
«21» 08 2017 թ.

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի զարգացման ներդրումային ծրագիր

Տեղ համայնքը գտնվում է Սյունիքի մարզի Գորիս քաղաքից 20կմ հեռավորության վրա, սահմանամերձ է Արցախի հանրապետության սահմանին: Տնտեսության հիմնական ճյուղերն են հողագործությունն ու անասնապահությունը: Համայնքների խոշորացման արդյունքում Տեղ համայնքը միավորում է Կոռնիձոր, Քարաշեն, Խնածախ, Արավուս, Վաղատուր և Խոզնավար բնակավայրերը:

Համայնքի բնակչության հիմնական եկամտի աղբյուր են հանդիսանում անասնապահությունն ու հողագործությունը: Հողագործության համար նպաստավոր պայմաններ են ապահովում աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները: Հողերը բերրի են: Մարդիկ մշակում են հիմնականում հացահատիկ: Տեղ համայնքը բարենպաստ է նաև բանջար-բոստանային մշակաբույսերի մշակման և այգիներ հիմնելու համար: Խորհրդային տարիներին համայնքում մշակվել է մեծ քանակությամբ ճակընդեղ, ծխախոտ, կարտոֆիլ, կերային մշակաբույսեր, զբաղվել են նաև պտղաբուծությամբ:

Անասնապահությունը տնտեսության երկրորդ հիմնական ճյուղն է: Տեղ համայնքը ամբողջ երկրում հայտնի է իր ոչխարաբուծությամբ և դրա հետ կապված ավանդույթներով, ինչպես նաև բրդի որակով: Այստեղ տնային տնտեսություններում հաշվարկվում է ավելի քան 60 000 գլուխ ոչխար: Այնուամենայնիվ, այս տարածաշրջանում բրդի խուզումը կատարվում է ոչ ճիշտ եղանակով և հիմնականում խուզված բրդի մեծ մասը դեն է նետվում որպես թափոն: Ձեռագործ ապրանքները բավականաչափ կոմերցիոն տեսքի չեն բերվում և շուկայում տեղ չեն գտնում, որը հանգեցնում է ավանդույթների անհետացման: Բրդի մեքենայացված վերամշակման բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում արտադրական արժեշղթայում և անխուսափելիորեն հանգեցնում է ցածր արտադրողականության:

Ծրագրի նպատակն է՝

<u>Նպաստել Տեղ համայնքի տնտեսական մրցունակության և աշխատանքային զբաղվածության բարձրացմանը՝ գյուղատնտեսության, բրդի մշակման և ձեռագործ ապրանքների արտադրության, SS ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծման և ոլորտային ՓՄՁ-ների աջակցման միջոցով:</u>

Նախագիծը համահունչ է Սյունիքի մարզի 2017-2025թթ զարգացման պլանի ռազմավարական ուղղություններին: Մասնավորապես այն կնպաստի մարզի արդյունաբերության մրցունակությանը և տնտեսական դիվերսիֆիկացիային, դրանով իսկ խթանելով տեղական արտադրանքի զարգացմանը: Գյուղատնտեսական էկոլոգիապես մաքուր ապրանքների զարգացումը հնարավորություն կտա գյուղական բնակավայրերի բնակիչների համար ստեղծելու եկամուտ ստանալու նոր հնարավորություններ :

Տեղ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը աջակցելու նպատակով նախատեսվում է ստեղծել «Տեղ համայնքի զարգացման Հիմնադրամ», որի ձևավորմանը մասնակցություն կունենան համայնքի բնակավայրերի շահագրգիռ անդամները, տեղական և միջազգային, ինչպես նաև օտարերկրյա ներդրողները, բարերարներ, որոնք հետաքրքրված կլինեն նախաձեռնությամբ և իրենց մասնակցությունը կունենան հիմնադրամի ստեղծման և գործունեության ծավալման գործընթացներում:

Հիմնադրամի ստեղծման գործընթացում կարևոր դերակատարում կունենան ոչ միայն ՏԻՄ ներկայացուցիչները, համայքնի բնակիչները, այլ նաև տեղական բիզնես ներկայացուցիչները և տարածաշրջանում հասարակական կարգով գործող կազմակերպությունները:

Հիմնադրամի գործունեությունը իրականացնելու նպատակով նախատեսվում է

- Տեղ համայնքում առկա նախկին, մասամբ ավերված հիվանդանոցի շենքի և հարակից տարածքի վերանորոգում և բարեկարգում

Ենթադրաբար 50-ականներին կառուցված մեկ հարկանի հիվանդանոցի շենքը (արտաքին չափերը՝ 30*13մ) վերջին անգամ օգտագործվել է որպես դպրոց: Ավելի քան տասը տարի է, այն չի օգտագործվում, հետևաբար մասամբ ավերված վիճակում է գտնվում: Հիվանդանոցի շենքը կարիք ունի հիմնավերանորոգման՝ տանիքը, նկուղային հարկի վրա սենյակների հատակի բոլոր կրող գերանները եվ փայտահատակը, միջնապատերը, առաստաղը եվ բոլոր դռներն ու պատուհանները (թվով 33 հատ): Հիմնովին կնորացվեն ամբողջ հոսանքի լարերը, ջրագծերը, կոյուղին, հատակը, բարեկարգման է ենթակա նկուղային հարկը, աստիճանները եվ բակը:

Շենքի եվ բակի վերանորոգման ծախսերը 30-40 միլոն դրամ է մոտավոր, մասամբ կիրականացվեն հիմնադրամի միջոցներով, մասամբ օգտագործելով օտարերկրա ներդրողների միջոցներից: Շինության և տարածքի փաստաթղթերի վավերացման դեպքում նախագծի իրականացման գործում ներգրավված կլինեն նաև նոր ներդրողներ:

- Բարեկարգված շենքում կգործի Հիմնադրամի եվ զարգացման ծրագրի կենտրոնը (Ադմինիստրացիա եվ ինֆորմացիոն կենտրոն)
- Լսարաններ՝ որոնք ծառայելու են Տեղ համայնքի բնակիչների, մասնավորապես երիտասարդների, աշխատանք փնտրողների կարողությունների զարգացման և դպրոցահասակ երեխաների համար /օտար լեզվի ուսուցման, երաժշտական եվ մշակութային տարբեր կրթական ծրագրերի, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստումներ իրականացման համար/
- Ձեռքի աշխատանքների արհեստանոց՝ նպատակ ունենալով զարգացնել Տեղ համայնքի բոլոր բնակավայրերի արհեստագործների մասնագիտական կարողությունները,

աջակցելու նրանց նոր ապրանքների ստեղծման և զարգացման, ինչպես նաև շուկաների որոնման գործընթացներում / տեղական կարպետների, գորգերի արտադրություն, փայտի եվ խեցեգործությոն զարգացում/: Արհեստանոցում կկազմակերպվեն նաև նոր մասնագետների վերապատրաստումներ: գորգ, կարպետ և գործվածքներ գործող սարքավորումներ և հաստոցներ, համապատասխան գործիքներ: Սարքավորումների արդյունավետ օգտագործման համար կվերապատրաստվեն տեղացի բնակիչներ /աշխատանք փնտրող արհեստավորներ/: Նախատեսվում է առաջին տարվա ընթացքում մշակել 2 տոննա բուրդ, որը կմթերվի Տեղ և հարակից գյուղական բնակավայրերի ֆերմերներից: Բրդի մշակման արժեշղթան ենթադրում է աշխատանք տեղացի ֆերմերների հետ ՝ ոչխարների խնամքի և բրդի որակի պահպանման վերաբերյալ: Ծրագրում նախատեսվում է ուսուցանել 10-12 տեղացի կանանց ձեռքի մանվածքների ոլորտում: Նրանց համար կկազմակերպվեն մասնագիտական ուսուցումներ: Արհեստանոցներում կօգտագործվեն ձեռքով մանված թելերը /գորգագործություն և կարպետագործություն/, ավտոմատ մանված թելերը /գործվածքների արտադրություն/ և գզված բուրդը /թաղիքագործություն/: Դրանք շուկայի պահանջարկի համապատասխան կկազմակերպեն արտադրությունը ողջ տարվա կտրվածքով: Նախատեսվում է թելերի 60% ներկել և բնական ներկերով և արհեստական ներկանյութերով: Բնական ներկերով ստացված թելը բնական երանգներով թելերի հետ նախատեսվում է օգտագործել գորգագործությոն և կարպետագործության ոլորտում: **<u>Ողջ գործընթացում ներգրավված կլինեն 8-10 աշխատակից:</u>**

- Նախկին հիվանդանոցի բակում նախատեսվում է կառուցել Ջերմոց-ինկուբատորներ, որտեղ նախատեսվում է իրականացնել տարբեր կուլտուրաների, բույսերի, բանջարեղենների մշակում: Այստեղ կներդրվեն նորագույն գիտելիքները և պարզ տեխնիկաները՝ լավագույն բնական բերքը ստանալու նպատակով: Այս ջերմոցները կլինեն նաև ուսուցողական կենտրոններ բնակավայրերի բնակիչների համար, որտեղ նրանք կստանան համապատասխան գիտելիքներ և աջակցություն՝ այս գաղափարը իրենց համայնքներում տարածելու և զարգացնելու նպատակով: Ջերմոցային տնտեսությունը կապահովվի եկամուտ կազմակերպության համար:

  Ջերմոցային տնտեսության անդամների և պոտենցիալ աշխատակիցների ուսուցում՝ աշխատունակության բարձրացման համար (օրինակ, ջերմոցային տնտեսության կառավարման դասընթացներ, հատուկ ապրանքների մարկետինգ, լավագույն գյուղատնտեսական փորձի, բանջարեղենի և կանաչեղենի ջերմոցային արտադրություն):

  Ջերմոցային տնտեսության ստեղծումը կապահովվի **<u>4 -5 աշխատատեղ</u>** Հիմնադրամում և նոր աշխատատեղեր համայքնի բնակավայրերում:

- Կաշվե ապրանքների արտադրություն. Համայնքում վերապատրաստվել են 11 արհեստագործ կանայք, որոնց համար նախատեսվում է տարածքում ստեղծել համապատասխան արտադրական պայմաններ վերապատրաստված կանանց համար:
- Վարձակալության սկզբունքով մեկ սենյակ հատկացվելու է Տեղ համայնքի ատամնաբուժին՝ այդ ոլորտում որակյալ սպասարկում ապահովվելու նպատակով: Ատամնաբույժը սպասարկում է համայքնի 7 բնակավայրերի բնակիչներին և միակ մասնագետն է տարածաշրջանում:
- Մեկ բաժին նախատեսված է տրամադրել ՏՏ ոլորտում նախաձեռնող խմբերին՝ այդ ոլորտում համայքնում վեր հանել առկա ներուժը եվ ստեղծել նոր աշխատատեղեր: "Օգմենթար" ՓԲԸ տնօրինությունը պատրաստակամություն է հայտնել կազմակերպել ՏՏ ոլորտի կադրերի վերապատրաստումներ և մեկ տարվա ընթացքում հիմնել առնվազն 5 հոգանոց թիմ: Նախագծի շարունակականությունը կապահովվի "Օգմենթար" ՓԲԸ անձնակազմը:
- Թվով երեք սենյակ հատկացվելու են հյուրանոցա-կացարանային նպատակների համար՝ համայնք այցելող տեղական եվ օտարերկրյա մասնագետներին, փորձագետներին, հյուրերին եվ այցելուներին գիշերակաց ապահովելու համար: Սպասարկման համար կունենանք մեկ հյուրանոցային տնտեսվարող:

Շենքի սպասարման համար նախատեսվում է ունենալ տեխսպասարկումը ապահովող մեկ աշխատակից:

ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**